1883

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Հայ վաճառական, հայ վաճառական,
Խաբիր ու զրկիր աղքատ եղբորդ,
Հարամ ռոճիկով լից քո գանձարան,
Ու միշտ կուշտ պահիր ուռած մեծ փորդ.

Քեզ ինչ փույթ, ասա, թե ազգդ խեղճ է,
Շատ հարկավոր է թե նա չունի հաց,
Քեզ ինչ փույթ, թե եղբայրդ մեղք է,
Միայն քո փորը լինի տկըզած.

Քեզ ինչ փույթ, ասա, թե խեղճ վանեցին
Հեծում է սոված, տուն ու տեղ թողած,
Տանջվում է տաճկի ու քրդի ձեռքին,
Միայն քո փորդ լինի տկըզած.

Քեզ ինչ՝ շինվում է հայ ուսումնարան,
Որ ուսում առնի տգետ հայ տղան,
Էհ, очень нужно, խավար մնա Հայաստան,
Տրիցատկի համար պինդ պահիր լուման.

Կողքիդ է տիկը, գրպանդ լիքը,
Քեֆ արա, ինչ բան է հայրենիքը.
Քեզ ինչ՝ անուսում մնան հայ որդիքը,
Թող նրանց դարդը քաշեն հայ մարդիկը.

Կուշտ է թափանդ, լի է գրպանդ,
Ամենը թամամ է, բայց վատ է բանդ –
Աղքատ մշեցին կանգնած է դռանդ.
«Աստված տա» – ո՞վ է կապում բերանդ.

Հայ վաճառական, շուտով փախիր տուն,
Խավարի միջի հմուտ ղեկավար,
Որ ժապավինյալ ցուցակ են բերում
Սովատանջ եղբարցդ՝ վանեցոնց համար.

Դե՛հ, գառնազգեստ գայլին դու նման,
Խաբիր ու զրկիր աղքատ եղբորդ,
Աչքերը կապիր, առ վերջին լուման,
Գուցե նրանով լցնես մեծ փորդ.

Միայն գիտենաս, հայ վաճառական,
Հեռու չէ օրը, օրն օրհասական
Նա կըգա շուտով և գաբրիելյան
Փողը կըկանչե և քեզ դամբարան.

Մահից չի փրկիլ քեզ ժանգոտ փողը,
Մարմինդ կըկլանե անգութ սև հողը,
Ամեն բան կանցնի և կանհետանա,
Միայն բարի անունն այստեղ կըմնա։